ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-05-01, aralezgg@gmail.com, aralez.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 25

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել N 7 ավագանու նիստի հետևյալ օրակարգը՝

1. Համայնքի 2020թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

/ զեկ. հ/պ-ի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Հ.Վ.Դեմիրճյան/

2.Համայնքի տարածքում 2021թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին.

/զեկ. հ/ղ Մ. Հ. Թևոնյան/

3. Արալեզի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/զեկ. հ/ղ Մ. Հ. Թևոնյան/

4. Նորատունկ այգի հիմնելու թույլտվության մասին

/զեկ. հ/ղ Մ. Հ. Թևոնյան/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-05-01, aralezgg@gmail.com, aralez.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 26

ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել՝

1.<< Սոց . անապահով անձանց >> գործառնական դասակարգման ծրագրի / 10.07.01.54 / տնտեսագիտական դասակարգման 4726 հոդվածին 1 160 000 /մեկ միլիոն հարյուր վաթսուն հազար/ դրամ :

Ճշտված պլանը սահմանել 2 660 000 /երկու միլիոն վեց հարյուր վաթսուն/ հազար դրամ:

2. << Հանրակրթական ուսուցում >> գործառնական դասակարգման ծրագրի /09.02.01.51 / տնտեսագիտական դասակարգման 4266 հոդվածին 200 000 / երկու հարյուր հազար / դրամ :

3. <<Կառավարման մարմնի պահպանում >> / 01-01-01-51/ 4252 հոդվածին 150 000 դրամ:

Ճշտված պլանը սահմանել 750 000 / յոթ հարյուր հիսուն / հազար դրամ:

4. <<Առողջապահություն այլ դաս >> / 07-06-02-55 / 4251 հոդվածին - 100 000 դրամ

5. <<Փողոցների լուսավորություն >> /06-04-01-51/ 4212 հոդվածին 52000 դրամ

Ճշտված պլանը սահմանել 2 952 000 հազար դրամ

4239 հոդվածին 240 000 դրամ

Ճշտված պլանը սահմանել 890 000 հազար դրամ

6.<<Ընդհանուր բնույթի հարաբերություններ >> 4729 հոդվածին 275 000 դրամ

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել 5 895 100 դրամ.

7. <<Ճանապարհային տրանսպորտ >> /04-05-01-51/ 5112 հոդվածի ծախսը պակասեցնել 764 500 դրամով՝

ա/ << Հանրակրթական ուսուցում >> /09-02-01-51/ 5122 հոդվածի պլանը սահմանել 314 500 դրամ:

բ/ <<գույքի նկատմամբ իրավունքի գրանցում >> /01-06-01-52/ 5133 հոդվածի պլանը սահմանել 450 000 դրամ.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ
ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-05-01, aralezgg@gmail.com, aralez.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 27-Ն

ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՈՒՄ 2021թ.-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությա օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9 - 14 հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արալեզ համայնքի տարածքում 2021թ. -ի համար տեղական տուրքերի վճարների դրույքաչափերը:

/Հավելվածը կցվում է/:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի
Արալեզ համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 8-ի N 27-Ն որոշման

Արալեզ համայնքի տարածքում 2021թ.համար սահմանել տեղական տուրքերի և վճարների
Հետևյալ դրույքաչափերը.

1).Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

ա. Հիմնական շենքերի և շինությունների համար

մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500դրամ.

բ. սույն կետի ,ա ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
- 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,
- 501-ից մինչև 1000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ,
- 1001-ից մինչև 3000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,
- 3001-ից և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50000 դրամ.

գ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
-մինչև 20 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ
- 20 նավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի , <<ա>>ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետի սահմանված նորմերը՝և դրույքաչափերը շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ

4) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքին (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200000 /երկու հարյուրհազար/ հհ դրամ

5) Խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ

6) Համայնքի տարածքում՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝ 25000 դրամ:

7) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

- 26-ից մինչև 50 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչհիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
- 50-ից մինչև 100 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ,
-100-ից մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
- 200-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
- 26-ից մինչև 50 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
- 51-ից մինչև 100 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ,
- 101-ից մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
-201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ:

8) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում՝ <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 175 /մեկ հարյուր յոթանասունհինգ/ հհ դրամ՝մեկ ք/մ-ի համար:

9) Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբ յեկտներին, բաղնիքներին (սաունաները), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000 դրամ.
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 250 000 դրամ.
դ. խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.
ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.
զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 75 000 դրամ:

10) համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչ ուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,
- 26-ից մինչև 50 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
-50-ից մինչև 100 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
- 100-ից մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ,
- 200-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝10000 դրամ,
- 500 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝15000 դրամ,

բ.Ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,
- 26-ից մինչև 50 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1000 դրամ,
-50-ից մինչև 100 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1500 դրամ
-100-ից մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝3000 դրամ,
- 200-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,
- 500 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ:

11) Ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գով ազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ.
գ.այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ.
դ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:
ե. դատարկ գովազդային վահանակների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 188 հհ դրամ:
զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 75 ՀՀ դրամ

12) Հայաստանի Հարապետության Արալեզ համայնքի անվանումը, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 75 000 դրամ:

13) համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է 5000 դրամ

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 250 000 դրամ:

15) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար ընթացիկ տարվա համար 25000 ՀՀ դրամ:

16) համայնքի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար

ա. կարաոկեի. դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար ընթացիկ տարվա համար համայնքի վարչական տարածքում 10000 ՀՀ դրամ

բ. հեստապարային ակումբի համար ընթացիկ տարվա համար համայնքի վարչական տարածքում 50000 ՀՀ դրամ

2.Սույն որոշման առաջին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:

3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնքում սահմանել 2020թ.-ի տեղական **վճարների տեսակները և հետևյալ դրույքաչափերը.**

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 ՀՀ դրամ:

2)Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում դրանց վերակառուցումը վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000/հինգ հազար/ ՀՀ դրամ:

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000/հինգ հազար/ ՀՀ դրամ:

4)համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

5)Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

6)Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին(վերնիսաժներին) մասնակցելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

7)Համայքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս սահմանել վճար

ա. կենցաղային աղբի համար, ըստ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար 150 ՀՀ դրամ

բ.ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով

-առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ 1քմ մակերեսի համար 30 ՀՀ դրամ

-հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների սպորտի

համար նախատեսված շենքերի և շինությունների մասով 1քմ մակերեսի համար 20 ՀՀ դրամ:
- վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով 1քմ մակերեսի համար 15 ՀՀ դրամ
-գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով 1քմ մակերեսի համար 3/երեք/ ՀՀ դրամ
-արտադրական , արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում ավտոկայանատեղի)՝ 1քմ մակերեսի համասր 5/հինգ/ ՀՀ դրամ
բ1.շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով 1քմ մակերեսի համար 50ՀՀ դրամ
գ. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 7-րդ ենթակետի բ պարբերության 1
-ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար 3000 ՀՀ դրամ կամ
-ըստ զանգվածի 10000 ՀՀ դրամ
8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սամանվում է 500 դրամ:
9)համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել
ա.կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500 ՀՀ դրամ
բ. ծնողօգնության թեթև միջամտության դեպքում 1000 ՀՀ դրամ, ծանր միջամտության դեպքում 5000 ՀՀ դրամ
գ.վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների մունականխարգելիչ պատվաստումներ և արյունառու մկամայլ նմուշառու բացառությամբ << Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների մանր եղջերավոր անասունների համար 100ՀՀ դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 200 ՀՀ դրամ
դ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար 200 ՀՀ դրամ
ե. ախտահանության մեկ քառակուսի մետրի համար՝ 200 ՀՀ դրամ
զ. միջատազերծում(դեզինսեկցիա) մեկ քառակուսի մետրի համար՝ 100 ՀՀ դրամ
է.կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) մեկ քառակուսի մետրի համար՝ 200 ՀՀ դրամ
ը.արհեստական սերմնավորման համար 5000 ՀՀ դրամ
թ. կենդանու հերձում մանր եղջերավոր անասունների համար 1000 ՀՀ դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 3000 ՀՀ դրամ
ժ. Կենդանու բուժում յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար 1000 ՀՀ դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 ՀՀ դրամ
ի. Կենդանիների նախասպանդային զննում մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 ՀՀ դրամ

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Լ.Վ. Խլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-05-01, aralezgg@gmail.com, aralez.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 28

ԱՐԱԼԵԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արալեզի համայնքապետարանի աշխատակիցների և մշակույթի տան աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն NN 1-2 հավելվածների:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված 2

Արալեզ համայնքի ավագանու

08.12.2020թ. 28 որոշման

ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1. Աշխատակիցների թվաքանակը-6
2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/	ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ
	Քաղաքացիական աշխատանք			
1	Մշակույթի տան տնօրեն	1	110000	1320000
2	Գեղմասվար-գրադարանավար	1	90000	1080000
3	Պարուսույց	1	95000	1140000
4	Ֆիզ. ղեկ	1	90000	1080000
	Տեխսպասարկման անձնակազմ			
5	Մշակույթի տան և գրադարանի հավաքարար	1	90000	1080000
6	Այգեպան -պարտիզպան	1	90000	1080000
	Ընդամենը	6	565000	6780000

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Վ. ԽԼՈՅԱՆ

Հավելված 1

Արալեզ համայնքի ավագանու

08.12.2020թ. 28 որոշման

ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2021Թ. ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1. Աշխատակիցների թվաքանակը-11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/	ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ
1	Համայնքի ղեկավար	-	300000	3600000
	Հայեցողական պաշտոններ			
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	150000	1800000
	Համայնքային ծառայության պաշտոններ			
3	Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	200000	2400000
4	Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	195000	2340000
5	Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	130000	1560000
6	Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	117000	1404000
7	Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	105000	1260000
	Քաղաքացիական աշխատանք			
8	Համակարգչային օպերատոր	1	104000	1248000
9	Անասնաբույժ	1	35000	420000
	Տեխսպասարկման անձնակազմ			
10	Պահակ	1	90000	1080000
11	Համայնքապետարանի հավաքարար	1	90000	1080000
	Ընդամենը	11	15160000	18192000

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Վ. ԽԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-05-01, aralezgg@gmail.com, aralez.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 29

ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳԻ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի զ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Մարտիկ Թևոնյանի առաջարկը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Համայնքի ներքոհիշյալ բնակիչներին 2021թ- ից ազատել հողի հարկից:
Դեղձի այգի հիմնելու համար ազատել չորս տարի ժամանակով՝
1. Միրզախանյան Ֆրունզիկ- 0,304 հա
2. Հովհաննիսյան Վարթեր - 0,2816 հա
3. Շահինյան Նորիկ - 0,323 հա
4. Կոստանյան Նորիկ - 0,551 հա
5. Կոստանյան Նորիկ - 0, 291 հա
6. Գևորգյան Հենրիկ - 0,57 հա
7. Գրիգորյան Նուբար - 0,619 հա
Խաղողի այգի հիմնելու համար ազատել երեք տարի ժամանակով՝
1. Միրզախանյան Համլետ - 0,678 հա
2. Միրզախանյան Արաքսյա - 0,205 հա
3. Կարապետյան Քնար - 0,572 հա
4. Թևոնյան Ռազմիկ - 10,9149 հա
5. Թևոնյան Ռազմիկ - 3,0609 հա
6. Թևոնյան Ռազմիկ - 5,0414 հա
7. Թևոնյան Ռազմիկ - 0,88137 հա
8. Թևոնյան Ռազմիկ - 1,31897 հա
9. Չաթալյան Ռուդոլֆ - 0,918 հա
10. Աթանյան Ելենա - 0,304 հա
11. Աթանյան Ելենա - 0,5372 հա
12. Աթանյան Ելենա - 0,499 հա
13. Աթանյան Ելենա - 0,454 հա

14.Թևոնյան Մարտիկ - 0, 54 հա
15.Թևոնյան Մարտիկ - 1, 4469 հա
16.Թևոնյան Մարտիկ - 0,7439 հա
17.Դավթյան Սոֆյա - 0,2 հա
18.Դավթյան Սոֆյա - 0,691 հա
19.Թադևոսյան Սամվել - 0, 2844 հա
20. Թադևոսյան Սամվել - 0,712 հա

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**